

Ես կը փնտռեմ,  
 Զորիզունին վրայ նըսեմ,  
 Լոյսի շող մը՝ զոր կը մարեն անդուլ վարանքն ու կասկած:

Ու տակաւ,  
 Կ'իջնէ ծանծրոյթն երազանքիս,  
 Զանդիսաւոր ու տրտում,  
 Ու կը պատէ իր մըշուշէ պարուտակին մէջ հոգիս  
 Անձկութիւնով անպատում:

Մըտածումը, ինչպէս ճամբորդ ուղեկորոյս,  
 Կ'անցնի փութով, անձկագին,  
 1[1]Երկարածիգ, մերթ լուսաւոր ու մերթ անլոյս,  
 Ճամբաներէն իմ մտքին:

Ա՛հ, կը շտապեն, կը փախչի՛ն  
 Ճամբաներու լոյսերն ամեն,  
 Յանկարծական խուճապի մը մատնըւած.  
 Ճառագայթի հազիւ վերջին  
 Բիծ ու խաղեր կը յամեն  
 Քովը ճամբուն մթամած՝  
 Ուր համագրաւ կը տարածուի վեհունի ցայգն համօրէն:

Ես կը փնտռե՛մ,  
 Պատըշգամին վրայ կանգուն,  
 Չոյգ մը աչքեր՝ մեղեսիկէ, որոնց ճըրագը վառի  
 Զոգւոյս մէգ ու խաւարի  
 Անդոհութեան մէջ դժխեմ:

Պատըշգամին վրայ կանգուն,  
 Ձեռքս յոգնաբեկ ճակատիս,  
 Մինչ 1[1] կը հոսի գիշերն ինչպէս ծով անհուն  
 Դէպ ի ափունքն երազիս՝  
 Ես կը սպասեմ յորդ ու վըճիտ լոյսերուն՝  
 Որոնց բոցը պիտի ցոլայ անծիր ցայգուն մէջ հոգւոյս: